

ՎԱՀԵ ԱՐՍԵՆՅԱՆ

բ.գ.թ., գիտաշխատող,
ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրակ. ինստ.,
vahearsen@yahoo.com,
+374 44013000,
<https://orcid.org/0009-0005-9897-4771>

DOI: 10.54503/1829-0116-2023.1-130

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԿՅԱՆՔՆ ՌԻ ԺԱՄԱՆԱԿԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉՅԱՆԻ «ԵՎ ԱՆԳԱՄ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր

Ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, Ռուբեն Սևակ, «ակտուալ պոեզիա», հայկական ջարդեր

Ամփոփագիր

Սույն հոփդածն անդրադարձ է Ալեքսանդր Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո» վեպին, որում ինչպես դրան նախորդած՝ «Բանկ Օտոման»-ում (2008թ.), հեղինակի թեմատիկ հիմնանյութն են պատմական այնպիսի իրողություններ, որոնք Օսմանյան կայսրությունում ապրող հայերի համար ունեցել են ճակատագրական և որոշիչ նշանակություն: Բանաստեղծ ու բժիշկ Ռուբեն Սևակի կյանքի ողբերգական պատմությունը մեզ համար այսօր էլ իր հրատապությունը չկորցնող պատմական թեմա է: Իր վեպում Ալ. Թոփչյանը ոչ միայն գեղարվեստական նրբությամբ ներկայացրել է Ռուբեն Սևակի կյանքի պատմությունը, այլև գրականագիտական խորությամբ քննել հայ բանաստեղծի ստեղծագործությունները ու նաև գիտական գործերը: «Եվ անգամ մահից հետո» վեպում, հարուստ գեղարվեստական արձակ հոսքի մեջ վերստեղծվել է Ռուբեն Սևակ բանաստեղծի զարգացման և ստեղծագործման շրջադարձային տարիները, նաև՝ արյունոտ դարաշրջանն ու Եղեռնի իրողությունները:

ЖИЗНЬ И ВРЕМЕНА РУБЕНА СЕВАКА В РОМАНЕ АЛЕКСАНДРА ТОПЧЯНА «И ДАЖЕ ПОСЛЕ СМЕРТИ»

Ключевые слова: геноцид, Османская Империя, Рубен Севак, «актуальная поэзия», армянские погромы

Резюме

Эта статья отсылает к роману Александра Топчяна «И даже после смерти», в котором, как и в «Османском банке» (2008), авторским тематическим материалом являются такие исторические реалии, которые имели роковое и решающее значение для армян живущих в Османской Империи. Трагическая история жизни поэта и врача Рубена Севака, и сегодня является актуальной исторической темой. В своем романе Ал. Топчян не только с художественной тонкостью изложил биографию Рубена Севака, но и с литературоведческой глубиной исследовал творчество и научные труды армянского поэта. В романе «И даже после смерти» в богатом художественном прозаическом течении воссозданы переломные годы развития и творчества поэта Рубена Севака, а также кровавая эпоха и реалии Геноцида.

LIFE AND TIMES OF RUBEN SEVAK IN THE NOVEL OF ALEXANDER TOPCHYAN “EVEN AFTER DEATH”

Key words: genocide, Ottoman Empire, Ruben Sevak, “actual poetry”, Armenian pogroms

Summary

This article examines Alexander Topchyan’s novel “And even after death”, in which, as in his previous work “The Ottoman Bank” (2008), author’s thematic exploration encompasses historically significant realities characterized by their decisive and fatal nature for Armenians living in Ottoman Empire. The tragic life story of Ruben Sevak, a prominent poet and physician, continues to be a relevant and topical subject within the realm of historical discourse. In his article Al. Topchyan not only presents a nuanced biography of Ruben Sevak, displaying artistic fineness, but also delves into an extensive analysis of the poet’s creative

and scientific endeavors, exhibiting literary depth. In the novel "And even after death", the narrative artfully reconstructs pivotal moments in Ruben Sevak's personal and professional development, interwoven with the grim realities and historical context of the Genocide. The prose style employed in the novel exhibits a rich artistic flow, enhancing the vivid recreation of these significant periods.

Նախաբան

Ռուբեն Սևակի պոեզիան սիրային լիրիկայի և քաղաքացիական պոեզիայի հաջորդումների և միասնության ամբողջություն է, դաժան և կոշտ աշխարհում Հայ մարդու դիմադրության գեղարվեստական արձանագրություն, աշխարհի քաղաքական շարժումը տեսնելու կարողություն, (մի աշխարհ, որի իրական դեմքը այնքան հստակ տեսնում ենք, հատկապես, Սևակի «Այլասերում» հոդվածում, (Ռ. Սևակ, Հայագիտարան, 2014)): Ինչ գեղարվեստական երևակայություն պետք է ունենա վիպասանը, (չմոռանանք նաև, որ նա մեր լավագույն քննադատներից է), որ կարողանա քայլ առ քայլ վերստեղծել մեծ բանաստեղծի առօրյան, ուսման տարիները Եվրոպայում, սիրո պատմությունը Յաննի Ապպելի հետ, պոետական մտորումները, իր ժամանակների մեկնաբանումները, այսինքն՝ այն ամենը, ինչ ձևավորել և Ռուբեն Սևակ է դարձրել Սևակին: Սևակի պարագայում գեղարվեստական վերապատկերման խնդիրը շատ ավելի բարդ է, որովհետև այդ կերպարի ստեղծումը սոսկ մարդկային կյանքի առօրյա դրսևորումների մատուցմամբ բավարար չէր, այն պահանջում էր նաև այն էպոխայի պատկերումը, որտեղ մարմնավորվում և իրականանում էր մեծ բանաստեղծի ներաշխարհը: Վեպն իսկապես պատկերային առումով բավականին հարուստ է, մամուլում հնչեցին կարծիքներ, որ այս վեպը, ինչպես նաև Ալ. Թոփչյանի 2018 թ.-ին ավարտած և 2021 թ.-ին հրատարակված «Որոգայթը» հրաշալի նյութ են կինոյի համար (Հ. Ասատրյան, Ազգ, 2021) (ի դեպ, Ալ. Թոփչյանը կինոյից հեռու մարդ չէր (Ն. Փայտյան, Կինոաշխարհ, 2013)): Ահա վեպի հերոսի այս դժվարին ընթացքի վերաստեղծումը հաջողվել է Ալ.Թոփչյանին, և ընթերցողի առաջ, զարմանալի հարուստ կինոնկար հիշեցնող զարգացումների մի ողջ աշխարհ է հայտնվում: Մենք ոչ թե կարդում, այլ տեսնում ենք այն: Բայց չմոռանանք, որ վեպի հերոսը նաև պատմական - գրական դեմք է, և ամեն ինչ չէ, որ կարող ենք նրան վերագրել: Ահա այս դժվարին խնդիրը հեղինակը կարողացել է հաղթահարել, և ներկա-

յացնել իր վեպով թե Սևակի դաժան ժամանակները և թե հերոսի հարուստ ներաշխարհը: Վիպասանը տվել է բանաստեղծի դիմանկարը տարբեր հայեցակետով, ինչպես ռենտգենյան նկարն է դաջում մարդու մարմնի պատկերը տարբեր հատումներով: Վեպը այն գրողի մասին է, որը կանխատեսել է Օսմանյան Իմպերիա յի հրեշավոր հանցագործությունները և ահազանգել այդ մասին իր պոեզիայում: «Կարմիր գիրքը» ժողովածուի «Ահազանգերը» բանաստեղծությունում հայոց եղեռնի արյունոտ դաշտերը նորից Ռուբեն Սևակի հրաշեկ տեսիլքում են և ահազանգում են «իրենց վայրի ու ահեղ ու մութ լալույն արույրի»:

Ղողանջը... Ողբի, ալեխարշ լալու,
Ճիչի, անեծքի. – Վայրագ ալելու –
Ու հառաջներում մեջեն խելահեղ,
Սարսափի անհո՛ւն ղողանջն է ահեղ:

Դիաձածկ կարմի՛ր, կարմի՛ր դաշտերեն,
Դուք չեք իմանար դավաճանորե՛ն
Մեզնով հափրացած շան ոհմակներու
Վերջալույսին դեմ ոռնումն ահարկու...
«Ահազանգերը», (Ռ. Սևակ, 1995, էջ 181)

«Եվ անգամ մահից հետո» վեպում օգտագործվում է (որոշ չափով) երկակի պատումի սկզբունքը, երբ Սևակին հետևող լրտեսներն իրենց գաղտնի զեկուցագրերում նոր չափման տակ են ներկայացնում կատարվածը, և իրենց մեկնությունը տալիս (հիմնականում թշնամական) Սևակի և նրան շրջապատող հայ առաջադեմ (և ոչ միայն հայ) ուսանողության քաղաքական գործունեության մասին: Ալեքսանդր Թոփչյանի վեպի գեղարվեստական արժանիքներից է նաև այն, որ հեղինակին հաջողվում է ներթափանցել այն միջավայրի մեջ, որտեղ իր ուսումն է առնում բանաստեղծը: Հեղինակի աչքից չի վրիպում ոչ մի մանրուք: Սևակի աճը որպես հայ գրողի և մտածողի, վեպում զարգանում է նրա և Յաննի Ապպելի սիրո պատմության հետ զուգահեռ: Նրանց հարաբերության պատկերումը վեպի խորը հոգեբանական – վերլուծական պատումի լավագույն էջերից է: Վեպն ընդգրկում է Ռուբեն Սևակի երիտասարդության կյանքի տարիները, որովհետև

թուրք ցեղասպանի դաշույնը մեծ բանաստեղծի կյանքն ընդհատում է նրա տաղանդի բարձրակետում, երբ նա երեսուն տարեկան էր: Վեպի հենց առաջին էջերից (երբ նկարագրվում է Սևակի մեկնումը Թուրքիայից Եվրոպա), չարագուշակ մի զգացում է համակում ընթերցողին, որովհետև այն աշխարհը, որի մեջ հայտնվել է բանաստեղծը, դեռ Ստամբուլի կայարանից սկսած մինչև Լոզան և Եվրոպան ներառյալ, հետևում է նրան, լրտեսում, սպառնում, ռասայական խտրականության ենթարկում, ահաբեկում, արգելում, ամեն գնով փակում կենսական և հոգևոր ճանապարհները

գրողի առաջ, իսկ վերջում գազանաբար վերջ տալիս նրա կյանքին: Ալ.Թոփչյանի

վեպի հոգեբանական-վերլուծական դրվագներն այնքան հավաստի են, որ ընթերցելիս չես կարողանում տարբերել, որն է բանաստեղծի կյանքի իրական դրվագը, որը՝ վիպասանի մտահղացումը: Ալ. Թոփչյանին հաջողվել է «բռնել» Սևակ-բանաստեղծի և Սևակ-բժշկի, Սևակ-ազգային գործչի ներքին ռիթմը, վիպական վերապատկերման այն «օպտիկական» կենտրոնը, որը հավաստի է դարձնում անգամ անհավատալիս (օր. կոմսուհու հետ կապված պատմությունը, որը գերմանական լրտեսական ցանցի զոհն է դառնում և հայտնվում Լոզանի մորգում, բանաստեղծ-բժշկի առաջ): Վեպի կարևոր արժանիքներից մեկն են մշակութային այն հարուստ շերտերը՝ հայկական ու եվրոպական, որոնց մեջ ձևավորվում է բանաստեղծը: Առանձնապես հաջողությամբ է ներկայացված բանաստեղծի հարազատացումը արևուվոյի գեղագիտության հետ: Բանաստեղծը, կարծես, կյանքից է գնում դեպի արվեստը: Հիշենք վեպի առաջին մասի որոշ դրվագներ, երբ սերը նույնանում է մահվան հետ, որ տեղ-տեղ հիշեցնում է ֆրոյդյան Էրոս-տանատոսը և Գուստավ Կլիմտի կտավները, որոնցում սիրո կողքին մշտապես ներկա էր մահվան ուրվականը, և հենց այդպես էլ վերնագրված է՝ «Էրոսի և Թանատոսի միջև»: Ի դեպ, այս թեմայի վերաբերյալ հետաքրքրական հոդվածով է հանդես եկել հայ բանաստեղծ, Էսսեիստ Մանասեն:

Ասացինք, որ Սևակի առաջիններից է, որ զգացել և պատկերել է իր պոեզիայում մոտեցող Եղեռնը: Նա մեր այն հազվագյուտ գրողներից է, որ ոչ միայն ստեղծագործ տեսիլքի շնորհիվ կանխատեսել է մոտեցող թուրքական հրեշիս, այլև ամեն ինչ արել՝ դիմակայելու Չարիքին և Հայ ժողովրդին զուլաացրել մոտեցող արհավիրքի մասին:

Այս ամենը Ալ.Թովչյանը պատկերում է նուրբ, հոգեբանական վերլուծականների շնորհիվ, երբեք հերոսին չկտրելով իր շրջապատից և այն տարիների պատմական դեպքերի զարգացումից, որոնք իրենց կնիքն են դնում Սևակի ճակատագրի վրա: Հեղինակի գրիչը ճկուն է և խորաթափանց՝ երբ ցույց է տալիս Սևակի ուսանողական տարիները օտար երկրում Շվեյցարիայում, նրա զարգացումը և պրոֆեսիոնալ, բարձր որակի բժիշկ դառնալը, որը հետագայում կգարմացնի անգամ իր թշնամիներին՝ թուրքերին:

Վեպի լավագույն էջերից են գերմանական և թուրքական միջավայրերի պատկերումը: Որքան գերմանականը քողարկված է և թուևոտ - դիվանագետ, այնքան թուրքականը պոռոտ-դաժան և անմարդկային-ցինիկ: Կարևոր է, որ Սևակի պոետական աշխարհը զարգանում է հենց այս խութանշաններով, ամրանում և անհատականանում պատմության արյունոտ երախի առաջ, որից դեռ կաթում է Հայոց ցեղասպանության արյունը: Վիպասանն ընդգրկում է Սևակի զարգացման և առնականացման բոլոր հնարավոր փաստերը և... տարբերականները, երբեմն վերստեղծելով այս կամ այն կենսագրական փաստից կերպարի զարգացման համար էականը, բայց գեղարվեստական ֆանտազիայի ոսպնյակի տակ այն արժևորելով և բոլորովին նոր չափման տակ դնելով առաջին հայացքից սովորական զարգացումները: Դրանք ընդհանուր հոսքի մեջ դառնում են նշանակալից և արժեքավոր, որովհետև խոսքը ինչ-որ սովորական հերոսի մասին չէ, այլ ազգային արժեքներ ստեղծող մեծ բանաստեղծի, որի ներաշխարհը մեր առաջ է նաև նրա պոեզիայի շնորհիվ: Բայց վիպասանն ավելի մոնումենտալ կերպար է ստեղծում, վիթխարի վիպական ճանապարհի տանելով իր հերոսին, ամենայն մանրամասնությամբ «դուրս գրելով» Սևակի և՛ առօրյա և՛ պոետական վիճակների խիստ մարդկային ընթացքը:

Գրքում հոյակապ են «վիպականացված» այն անձինք, ովքեր ուղեկցելու են Ռ.Սևակին նրա կարճ կյանքի ընթացքում: Նրանք բոլորն ել «ռեյնֆ» են ստանում գրողի գրչի ուժով: Թովչյանը կյանքի և կենսափորձի վառվռուն կադրեր է ստեղծում հատկապես Լոզանի ուսանողական միջավայրը պատկերելիս: Բայց Լոզանում գտնվելիս, Ռ.Սևակի ողջ էությունը իր հայրենիքում է, անգամ երբ իր խելքով և քաղաքական հասունությամբ, դառնում է ուսանողության առաջնորդը:

Շվեյցարացի բժշկի հարցին հրեաների և հայերի տարբերության

մասին, Սևակը պատասխանում է. «Այնուհանդերձ մի էական տարբերություն կա մեր և նրանց միջև, հրեաները լսում են իրենց քահանաներին, իսկ հայերն՝ իրենց բանաստեղծներին, այնպես որ Սիամանթոն իրավունք ունի այդպես ասելու... Նա ուրիշ ելք չունի, պիտի ապրի» (Ա. Թովչյան, 2005, էջ 155): Իսկ խտալացի փիլիսոփայի հետ զրուցելիս, Սևակը նշում է իր գրական դավանանքը. «Բանաստեղծը Ղովտի կինը չէ, որին արգելված է ետ նայել... ընդհակառակը, ես սիրում եմ շիտակ նայել իրականության երեսին, ես ուզում եմ հասկանալ, թե ինչ է պատրաստում ինձ համար»:

Թե վեպում, և թե իր ստեղծագործական կյանքում Սևակը մոտենում է պոեզիայի դերի և նպատակի նոր մեկնաբանման խնդրին: Եվ ամենակարևորը, նա դրան հասնում է սեփական կենսափորձի շնորհիվ, և տարիներ առաջ իր գրած բնապաշտական պոեզիան, հիմա այլ տպավորություն է թողնում. «Փառահեղորեն տպագրված բանաստեղծությունները նրան թվացին խեղճ, անօգնական... Այսինքն գուցե վատ չէր տպված: Նրբին մի գեղեցկություն կար, անդորր հիացում: Սակայն ընդամենը մի քանի ամիս առաջ ծնված գործերը թվացին հնացած ժամանակից դուրս... Մանավանդ «Լեման» բանաստեղծությունը՝ գեղեցիկ բնանկար, հրաշքին մերձենալու ինքնաբերական մի մղում: Մի՞թե կարող էր չնկատել բնության այդ կատարելությունը և մի՞թե կարող էր զսպել բանաստեղծությամբ արտահայտվելու անկեղծ ցանկությունը...»:

Հրաշայի էջեր են հերոսի ստեղծագործ երկության ձևափոխման այս մտորումները. «... մի՞թե Լեմանը կորցրեց իր գեղեցկությունը, մի՞թե խամրեց Շվեյցարիայի բնանկարի հեքիաթային հմայքը... Ոչ, ամեն ինչ նույնն էր մնացել, միայն թե ինքն է փոխվել...»:

Վեպի հաջորդ հատվածը պարզաբանում է ամեն ինչ. «Այն բանաստեղծները, որ իրենից առաջ հիացել էին Լեմանի գեղեցկությամբ, առիթ ունեցել էին արդյոք բռնության նման դրսևորումների հանդիպելու այստեղ, և եթե այո, ապա ինչպե՞ս էին կարողացել նախկին ոգևորությամբ կարապետել և ալպյան լեռներով հիանալ: Չէ, հագիվ թե... Նրանց ժամանակները երանելի էին,...բանաստեղծը թեկուզ վտարանդի, պետք էր հասարակությանը, առանց գեղեցիկի մարդիկ չէին կարող ապրել, մինչդեռ հիմա բանաստեղծությունը և արվեստը ստորացված են դրամով, և ոչ միայն... դիվական մի մութ ուժ է գալիս՝ ծաղկած, թաքնված, անդեմ ու անկերպարան, որը սակայն ուզած

պահին կարող է մտնել ամեն տեղ»:

Վեպում հավաստի է ներկայացված աշխարհի գեղեցկությամբ հիացող, բնաշխարհ և սեր վերապրող բանաստեղծի անցումը դեպի բռնության հրաշեկ «պատարագների» հայտնության պատկերումը: Ռ.Սևակը գիտակցում է, որ իր պոեզիան մտնում է վտանգավոր մի ոլորտ. «Նման հայտնությունների ականատեսները կուրանում են կամ խելագարվում... կամ ոչնչանում... Իսկ եթե հնարավոր չէ ուղիղ նայել, ինչպես արևին կնայեին կամ մահվան, և բանականությունը պահպանել, ինչպես Ս.Հովհաննեսը Պատմոս կղզում...»:

...Աստված ողորմած է և բարեգութ: Հնարավորություն է տալիս, որ ընտելանանք սարսափի պատկերներին, թե ոչ, միանգամից կկուրանանք ու կհամրանանք...»: Ցեղասպանության ալիքը մոտենում է և բանաստեղծը պահանջում է և նոր «Եսթետիկա», վերապատկերման նոր չափանիշներ:

Նույն այս մտորումների արձագանքն է Ռ.Սևակի «Այլասերում» հոդվածը, որտեղ բանաստեղծը «ակտուալ» պոեզիայի դիրքերից հանդիմանում և քննադատում է «գեղագիտական» պաճուճանքների ու ծեքծեքումների մեջ խճճված ժամանակակիցներից ոմանց. ազգը դաժանաբար կոտորվում էր, իսկ առանձին հայ գրողներ «խելոքներ, փիլիսոփայացներ, քաղաքակրթվեր են...»: «Գառնուկի մը պես անգեն ցեղ մը ամեն օր կհոշոտվի, իսկ մեր գամբռները խելոքներ, փիլիսոփայացներ, քաղաքակրթվեր են, տիեզերական եղբայրակցության խոսքեր կընեն մեզի ու կերագեն այն հեռավոր օրվան, ուր գայլ ու գառնուկ մեկտեղ կարածին...» (Ռուբեն Սևակ, Երկեր, էջ 335):

Որքա՞ն ճիշտ է բնորոշվում նաև մեր ժամանակները, ասես այն գրված է պեյզաժային, «Խոհա-փիլիսոփայական» տափակ «բանաստեղծություններ» մոգոնվող «կես-հանճարների» մասին, որոնք գաղտնի օգտվելով կենսոլոմի «գաղափարական շիլայից», «ազգային քնար» էին հնչեցնում, մոլախոտի պես խեղդելով իրական գրականության սաղմերը, սոցռեալիզմի «չագուլի» զարկերով:

սպանելով եկող սերունդը: «Կես-հանճարներ շա՛տ: Բայց երբ փոքրիկ ցեղի մը մտավորական բանակը տաղանդավոր փոքրիկ վիժուկներով միայն կլենա, անհանդուրժելի, գայթակղեցուցիչ, դատապարտված ցեղ մը կ'ըլլա այն: Չգո՛ւյշ, զգո՛ւյշ»: Ինչպես և Թոփչյանի սթափ և ինտելեկտուալ պայքարի կոչ անող վեպում, այս հատվածում նույնպես (վեպը և Սևակի հոդվածը արձագանքում են իրար և դա

բնական է) Սևակը անարգանքի սյունին է գամում բոլոր տեսակի այն «գրվածքները», որոնք մոտավորապես ցեղասպանությունից հեռու կանգնած, անրջում են «Պոեզիա» և «մաքուր ռեալություն», հայի արյան մեջ թաթախելով իրենց գրիչը.

«Որբուկի պես անտեր ցեղ մը հուժկու, ու լուսեղ ու սրտաբուխ բարբառի մըն է ծարավ: Իսկ մեր գրագետները հանելուկային, առեղծվածային, խավարակուռ բաներ կ'ընեն իրեն. ու մեր քերթողները՝ գրիչներն հայ արյան մեջ թաթախելն վերջ, չինարեն տաղեր կգրեն, որպեսզի մարդ չհասկնա...»:

Այս հատվածը, որ ասես գրված է նաև խորհրդային տարիների պոետական մի ողջ մտայնությանն ընդդեմ, երբ «իրական վտանգները» թողած մի կողմ, պատկերվում էր կյանքի «սուռնոցատը», և ինչքան ուժգին էր եղծվում արվեստը, այնքան ավելի «մեղալակիր» էր դառնում գրողը. «Ահա թե ինչո՞ւ իրական վտանգները թողելով, հովերու դեմ ու մենք մեզ դեմ կպայքարենք: Ահա թե ինչո՞ւ փոխանակ հառաջ դիմելու, խենթերու պես կեցած տեղներուս վրա կցատկենք երկու հազար տարիէ ի վեր...»:

Այս ամենը ավելի արդիական է հնչում և միս-արյուն է ստանում Ա. Թոփչյանի վեպում, որովհետև հերոսը՝ Ռ. Սևակը, ամեն վայրկյան հասունանում է մեր առաջ և գործողությունն ու խոհը, կատարվածն ու գալիքը, մեկնաբանություններն ու իմաստավորումը իրար են հաջորդում, բնական հոսք տալով կերպարի զարգացմանը: Այո, էջ առ էջ, Թոփչյանի վերստեղծող գրչի տակ, հերոսը ձևավորվում է որպես իր Հայրենիքի ճշմարիտ գավակ, որը ոչ միայն բժշկական գիտելիքներ է ձեռք բերում Լոզանում (նորից հանուն իր երկրի), այլև պայքարի մեջ մտնում այն հրեշի դեմ, որի անունն է Օսմանյան կայսրություն: Վեպի հենց առաջին էջերից հերոսին տեսնում ենք լրտեսական և դավաճանական ցանցով շրջապատված: Թուրքական կառավարությունը հետևում էր հայ մտավորականների ամեն քայլին: Թոփչյանի այս ստեղծագործությունը նաև դաստիարակչական վեպի նմուշ է, երբ հեղինակը հետևում է հերոսի ներաշխարհի զարգացմանը, նաև՝ «դրսի» աշխարհի փոփոխումներին (ներաշխարհի շարժմանն համընթաց), նուրբ գծագրում Ռուբեն Սևակի կողմից աշխարհի ճանաչման ցավագին պրոցեսը, երբ կամքն ու ինտելեկտը հաղթահարում են գայթակղություններն ու ավելորդ դեգերումները և մեր առաջ հառնում է իր արարքների համար պատասխանատու գրողը, որի պոե-

գիան նաև զգուշացնում է. Չարիքը մեր կողքին է և պետք է միասնական լինել ցեղասպան թշնամու դեմ պայքարի խնդրում: Փաստորեն, մի ավելի լայն ընգրկման մեջ, վեպի հերոսների կյանքը շարժում է Պատմությունը և հերոսները ուզեն թե չուզեն, պատմական ժամանակի դաժան հարձանուտի մեջ են և այստեղ է երևում վիպասանի նուրբ վարպետությունը, որովհետև, եթե անգամ պատմական՝ այսպես կոչված «օբյեկտիվ» ընթացքը տանում է նրանց ճակատագրին ընդամենը, միաժամանակ այդ նույն պատմականը բացահայտում է անհատի մեջ ապրող այն ուժերը, որոնք նույնպես պատմության մի մասն են, անգամ այդ ընթացքն իմաստավորողը: Պատմությունը նաև բացահայտում է՝ ով ով է: Վեպի հերոսի «ով» լինելու հարցում վիպասանը վիթխարի վերլուծական, հոգեբանական և գրական ու գիտական աշխատանք է տարել, ժամանակակից վիպասանության և հոգեբանության նվաճումների ոսպնյակի մեջ հավաքելով հերոսի «Ռուբեն Սևակ» դառնալու ընթացքը: Հոյակապ են Սևակի և գերմանուհի Յաննի Ապելի սիրո պատմության էջերը: Այդ պատմությանն ասես մասնակցում են նաև քաղաքի ողջ ուսանողությունը: Բայց այս մաքուր և մարդկային երջանկության սիրո փոթորկուն ընթացքին միախառնվում են թուրքիայից եկող սահմուկեցուցիչ լուրերը, որոնք օրեցօր ահագնանում և կործանում են հերոսներին: Ես դժվարանում եմ հայ արձակում ժամանտիկ սիրո այսպիսի հարուստ, հավաստի և նրբանկատ վերստեղծում հիշել: Հատկապես, կուզեի առանձնացնել Յաննի Ապելի կերպարը: Վիպասանն, իրոք, զարմանալի համոզությամբ, քայլ առ քայլ ներկայացնում է այդ, իսկապես, հերոս կնոջ ողբերգական սիրո պատմությունը:

1914թ.-ի ապրիլին Ռուբեն Սևակն իր ընտանիքով վերադառնում է Թուրքիա: Թուրքական դաժան միջավայրը առավել ծանր տպավորություն է թողնում Յաննի Ապելի վրա. «Ռուբեն, դառնանք այս շոգենավով, ես շատ չհավնեցա այս երկրին... Սոսկում եկավ վրաս. չե՞ս տեսներ, ոչ մեկուն դեմքը կժպտի» (Ռ. Սևակ, Երկեր, էջ 8, 1995):

Վեպի պատմական հենքը հեղինակի կողմից ճշգրտորեն մշակված է, և հավաստի է դառնում էջ առ էջ: Անձնականի և պատմականի միաձուլումը Սևակի ճակատագրում վեպի գեղարվեստական արժանիքներից է: Սևակի ձերբակալման և աքսորի պատկերումը վեպի ցնցող էջերից է: Յաննիի հերոսական և միաժամանակ հոգեվարքային ճիգերը ամեն գնով փրկել թուրքական ցեղասպանների ան-

դունդի եզրին հայտնված ամուսնուն, ավարտվում է պարտությամբ: Վեպի այս վերջին էջերը կարելի է բնորոշել ֆրանսիացի Լ.Ֆ.Սելինի գրքի վերնագրով՝ «Ճամփորդություն դեպի գիշերվա վերջ», դեպի դժոխք, որից այն կողմ ճամփան ընդհատվում է: Սևակին սպանում է հենց այն չեթեճի թուրքը, որ աղետորեն խնդրում էր իր աղջկան բուժած բժշկին դավանափոխ լինել և ամուսնանալ նրա հետ: Տեսնելով, որ ոչինչ չի ստացվում, նա նույնպես մասնակից է դառնում Սևակի սպանությանը, քաղցրախոսելով և դանդաղ-զաղունաբար դաշույնը հանելով. «Գլուխդ մի շրջիր, Նայի՛ր, դոկտորս, լավ Նայիր... յոթ... Նայիր, Նայիր, դոկտորս... իննը... լավ դոկտորս, Արաբաջիբաշին բարի է, Արաբաջիբաշին լավությունը գնահատել գիտի, ես էլ քեզ լավություն կանեմ...»

...Սևակը գլուխը հետ գցեց, որպեսզի միայն երկինքը տեսնի, ուսերը ցնցեց, ձեռքը փորձեց ազատել կոշտ պարանի կապանքներից... Եվ այդ պահին մի սուր ծակոց զգաց այնտեղ, ուր սիրտն է... Բանի տեղ չորեք... Սրտի ծակոց վաղուց ուներ... Չգաց նաև, թե ինչպես կապանքներից ազատված սլանում է երկինք... Եվ այդ ծակոցն անսպասելի սլացքի հրճվանքից էր գուցե և ոչ թե Արաբաջիբաշիի դաշույնից, որ մինչև կործ միարժեք սիրտը...»:

«Հոկտեմբերի 15-ին, Յաննին երկու զավակների և մոր հետ ճանապարհ ընկավ դեպի Շվեյցարիա, ընդամիշտ թողնելով այն երկիրը, որ գերեզման դարձավ մի ամբողջ ժողովրդի համար»:

Եզրակացություն

Վեպը հսկայածավալ նյութ է պարունակում այն դարաշրջանի մասին, ուր ապրել և ստեղծագործել է Ռուբեն Սևակը: Միաժամանակ վիպասանին հաջողվել է, անգամ այսպիսի ընդգրկման առկայության դեպքում, պահպանել գեղարվեստական խոսքի բարձր որակը, եվրոպական վեպին բնորոշ լավագույն դրսևորումների հասցնելով Ռ.Ս.Սևակին նվիրված գրվածքը:

Այլ. Թովչյանն իր վեպով թույլ չի տալիս, որ հայոց ցեղասպանության վերքը փակվի: Նորից ու նորից դնում է խնդիրներ, հարցեր, մեղադրանքներ և շերտ առ շերտ, իր հերոսի՝ Ռուբեն Սևակի միջոցով, թաքնված անցյալի վրայից հեռացնում է հողն ու քարը, պեղում, որպեսզի բացահայտի Եղեռնի ցավի վիթխարի շտեմարանը, այսինքն՝ անում է այն, ինչ կարելի է անվանել «ներաշխարհի հնաբանությ»

յուն»։ Կարողալով վեպը՝ զգում եմ այն, ինչ կզգաս բազմաթիվ ընթերցողներ. ասես, վիպասանի բացած ճեղքով հետևում ենք նրան դեպի ցեղասպանության հրեշավոր լաբիրինթոսը, որը Ալ. Թոփչյանի գրչի շնորհիվ դառնում է մեր սեփական ապրածն ու տառապածը։ Գիրքը մեզ տանում է իր հետևից, և այն շրջանցելն անհնար է։

Ալեքսանդր Թոփչյանի վեպն անակնկալ հայտնություն է։ Այն զարմացնում է ամեն ինչով, և կարող ենք ասել, որ իր տեսակի մեջ եզակի է հայ արձակի պատմության մեջ։

Վահե Արսենյան
ԵՊՀ դոցենտ, բ.գ.թ.

Գրականության ցանկ

1. Թոփչյան Ալեքսանդր, «Եվ անգամ մահից հետո», ՀԳՄ հրատարակչություն, Երևան, 2005թ.
2. Թոփչյան Ալեքսանդր, «Բանկ Օտոման», «Գասպրիկո» հրատ., 2008թ.
3. Թոփչյան Ալեքսանդր, «Որոգայթ», «Լուսաբաց» հրատ., 2021թ.
4. Սևակ Ռուբեն, Երկեր, հատոր առաջին, «Լույս», 1995թ.
5. Freud Sigmund, Beyond the Pleasure Principle, Dover publ., 2015, 64 p.
6. Celine Louis-Ferdinand, Journey to the End of the Night, New Directions publ. 1934, 453 p.
7. <https://www.hayagitaran.am/2014/06/id-4513.html> (մուտք՝ 10.01.2023)
8. <https://azg.am/am/2021092428/> (մուտք՝ 12.01.2023)
9. <https://kinoashkharh.am/2013/12/nuyn-dur-bacvel-e-3-angam-alegsandr-topchyan/> (մուտք՝ 13.01.2023)
10. <https://gisher.org/manase-t24477.html> (մուտք՝ 17.01.2023)
11. <https://groghutsav.am/2022/04/24/> (մուտք՝ 20.01.2023)
12. <https://aspu.am/website/images/website/Amalyan%20Gohar.pdf> (մուտք՝ 20.01.2023)
13. <https://granish.org/hayoc-bari-taregrutyuny/> (մուտք՝ 03.02.2023)

REFERENCES

01. Topchyan A., Yev angam mahitc heto, [Even After Death], Yerevan, HGM hrat. 2005, 591 էջ

02. Topchyan A., Bank Otoman, [The Ottoman Bank], Yerevan, Gasprint hrat. 2008, 229 էջ
03. Topchyan A., Vorogayt, [Even After Death], Yerevan, Lusabats hrat. 2021, 227 էջ
04. Ruben S., Yerker, hator arajin, Luys hrat., 1995, 235 էջ
05. Freud Sigmund, Beyond the Pleasure Principle, Dover publ., 2015, 64 p.
06. Celine Louis-Ferdinand, Journey to the End of the Night, New Directions publ. 1934, 453 p.
07. <https://www.hayagitaran.am/2014/06/id-4513.html> (մուտք՝ 10.03.2023)
08. <https://azg.am/am/2021092428/> (մուտք՝ 12.03.2023)
09. <https://kinoashkharh.am/2013/12/nuyn-dur-bacvel-e-3-angam-aleqsandr-topchyan/> (մուտք՝ 13.03.2023)
10. <https://gisher.org/manase-t24477.html> (մուտք՝ 17.03.2023)
11. <https://groghutsav.am/2022/04/24/> (մուտք՝ 20.03.2023)
12. <https://aspu.am/website/images/website/Amalyan%20Gohar.pdf> (մուտք՝ 20.03.2023)
13. <https://granish.org/hayoc-bari-taregrutyuny/> (մուտք՝ 03.04.2023)

Վահեն Արամի Արսենյանը ունի բ. գ. թ. կոչում, ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտաշխատող է, ԵՊՀ դոցենտ: Ինտաքորության շրջանակն է՝ անգլո-ամերիկյան 19-20 դդ. գրականություն, Շեքսպիր, համաշխարհային կինո և հոգեբանություն: Հեղինակ է երեսունից ավելի գիտական հոդվածների:

Vahe Arsenyan, k.f.n. доцент, работает в Институте литературы им. М. Абегяна НАН РА и преподает в ЕГУ. Сфера интересов: англо-американская литература 19-20 вв., Шекспир, мировое кино и психология. Автор более тридцати научных статей.

Vahe Arsenyan, Ph.D., associate professor, is employed at the Institute of Literature after M. Abeghyan of the National Academy of Sciences of RA, he also teaches at Yerevan State University. His areas of interest encompass Anglo-American literature of the 19th and 20th centuries, Shakespeare, world cinema, and psychology. Furthermore, he has authored over thirty scientific articles.